

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ա. Ն. ԲՈՋՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՆԱԶ ԳՈՏՈՒ ՀԱԶՎԱԳՅՈՒՑ ԷԿՁՈՏՆԵՐԸ

Երևանի կանաչ գոտում մշակում են բարձր դեկորատիվություն ունեցող մի շարք էկզոտ տեսակներ, որոնք քաղաքի կենտրոնական մասերի տնկարկներում բուրգավորվել են հանդիպում և կամ թեքես ներդրված են շատ քիչ: Այս հողվածում նկարագրվում են այդ հազվագյուտ և արժեքավոր տեսակները, հիմք ընդունելով 1960—61 թթ. մեր կողմից կատարված դիտողությունները:

Բարդի Բոլեի.—*Populus boleana* Lauche. Տարածված է Միջին Ասիայում, աճում է դեռահողմաներում և խոնավ թեքությունների վրա: Երևանում հանդիպում է կանաչ գոտում՝ ծառուղիներում կամ առանձին խմբերով: Տընկիները բերվել են Կրասնոդարի երկրամասից 1938—1940 թթ.: Ներկայումս ծառերն ունեն 18—20 մ բարձրություն և 22—25 սմ բնի տրամագիծ: Չեն ցրահարվում, հիվանդություններով կամ ֆլասատուներով վարակված չեն: Տալիս են բազմաթիվ արմատային մացառներ:

Բրգաձև պսակը, տերևների վերին մակերեսի վառ կանաչ, ստորին կողմի արծաթափայլ գունավորումը, ողորկ և մոխրականաչավուն բունը միանգամայն դեկորատիվ են դարձնում Բոլեի բարդուն, որի շնորհիվ էլ Երևանի պայմաններում պետք է լայնորեն օգտագործել՝ տնկելով ծառուղիներում և առանձին խմբերով:

Բոլի կովկասյան.—*Carpinus caucasica* Grossh. Տարածված է Հայաստանի գրեթե բոլոր անտառներում՝ ծովի մակերևույթից մինչև 1800 մ բարձրության վրա: Հաջողությամբ աճում է Երևանի կանաչ գոտում, հատկապես Գանաքեռի և Նորքի թեքությունների վրա, որտեղ առանձին ծառեր հասնում են 12—14 մ բարձրության: Տնկումները կատարվել են խրամատներով և փոսերով, առանց որոշակի սիստեմի, այլ տեսակների հետ խառը: Ցրտահարման, գազաթնային ճյուղերի չորացման, տերևների արհաճարման, հիվանդությունների և ֆլասատուներով վարակվածության դեպքեր չի նկատվում: Մեխանիկական ֆլասավածք ստացած և հատված ծառերի բներից առաջանում են մացառներ: Ծաղկում է մայիսին, պտուղները հասունանում են հոկտեմբերին: Նպաստավոր պայմաններում մայր բույսերի շրջակայքում նկատվում է բավարար վերաճ:

Գեղեցիկ խիտ պսակը և տերևների հաճելի գույնը կովկասյան բոխուն դարձնում է բարձր դեկորատիվ, որի համար էլ այն պետք է որոշակի տարածում գտնի Երևանի կանաչ տնկարկներում:

Բուևգուկ կանաչական.—*Gymnocladus dioica* K. Koch. Հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Մինչև 30 մ բարձրությամբ և 60—70 սմ բնի տրամագիծով ծառ է: 1950 թ. տնկվել է Սարի թաղի հարավային թեքության վրա՝ փոսերով, խառը՝ սպիտակ հացենու հետ: Ծառերը, որոնց բարձրությունը 6—8 մ է, իսկ բնի հաստությունը 8—10 սմ, գտնվում են բուն աճման

ըրջանում: Վերջին տարիների ընթացիկ աճը 40—50 սմ է: Գազաթնային ճյուղերի չորացում և հիվանդութիւնների ու ֆլասատուններով վարակածութիւն դեպքեր չի նկատվում: Շատ ցրտադիմացկուն է, անգամ ամենախիստ թխան դեպքերին չի ցրտահարվում, տալիս է մեծ թվով արմատամացառներ: Ծաղկման ժամանակին չի ցրտահարվում, տալիս է մեծ թվով արմատամացառներ: Ծաղկում է հունիս ամսին (ընթացիկ ճյուղերի վրա): Ծաղիկներն ունեն սպիտակ գույն: Պտուղներն ունը են, մսալի, լայն, հասունանում են հոկտեմբերի գույն: Պտուղներն ունը են, մսալի, լայն, հասունանում են հոկտեմբերի վերջին և մինչև գարունն թնում են ծառի վրա: Դեկորատիվ է իր խոշոր տեղերի, առանձնապես նրանց աշնանային դեղնավուն գունավորման շնորհիվ: Անհրաժեշտ է օգտագործել հզոր և պարարտ հող ունեցող պարտեզներում:

Երկաթածառ.— *Parrotia persica* C. A. Mey. ՄՍՍՄ-ում բնականորեն աճում է միայն Լենքորանում, որտեղ ծառերի բարձրութիւնը հասնում է մինչև 25 մետրի, բնի տրամագիծը 30—40 սմ-ի: Երևանում հանդիպում է միայն Նորքի սարալանջում շագանակատերև կաղնու հետ միասին: Տնկիները բերվել են Հյուսիսային Կովկասից 3—4 տարեկան հասակում: Ներկայումս նրանք 26—28 տարեկան ծառեր են, ունեն 5—6 մ բարձրութիւն և 14—16 սմ տրամագիծ: Ընդհանուր առմամբ ծառերը դանվում են լավ վիճակում, սակայն որոշ բույսեր ընկնելով հարևան արագաճ տեսակների ստվերի մեջ ճնշվել են և կարծե ունեն լուսավորման: Ծառերի մեծ մասի մոտ գագաթնային ճյուղերի չորացում, տերևների այրվածք, բնի կեղևի ճեղքվածքներ չեն նկատվում: Վերջին տարիների ընթացքում չեն ենթարկվել անգամ մասնակի ցրտահարման: Բներից առաջացած մացառները առաջին տարում հասնում են մինչև 0,8—1 մ երկարութիւն: Ծաղկում է ապրիլի առաջին կեսին, պտուղները հասունանում են սեպտեմբերին: Սերմերը միանգամայն կենսունակ են, սակայն վերան անբավարար է, քանի որ սերմնաբույսերի մի մասն առաջին տարիներին ոչնչանում են մասնակի ցրտահարութիւնից, մի մասն էլ այլ անբարենպաստ պայմաններից: Հանդիպում են 3—4 տարեկան բուսակներ, որոնք առողջ են և լավ են աճում: Երկաթածառը բարձր դեկորատիվ բույս է, հանձնարարվում է սահմանափակ քանակով աճեցնել Երևանի պարտեզների և պուրակների ցրտից և քամիներից պաշտպանված, բայց լուսավոր տեղերում:

Զելկվա բոխտառ.— *Zelcova carpinifolia* Dip. Տարածված է Լենքորանի անտառներում, ուր ծառերի բարձրութիւնը հասնում է մինչև 30 մ-ի: Զերմասեր է, հողի նկատմամբ ոչ պահանջկոտ, սակայն ավելի լավ է աճում հարուստ և հզոր հողերում: Տնկիները բերվել են 1938 թ. երկաթածառի և շագանակատերև կաղնու հետ միասին և տնկվել նույն խրամատներում, սակայն վատ խնամքի պատճառով բույսերի մեծ մասը չորացել է, մնացել է միայն 2 ծառ: Ներկայումս գտնվում են լավ վիճակում, չեն ենթարկվում անգամ մասնակի ցրտահարման: Ծառերի բարձրութիւնը 5—6 մ է, տրամագիծը 15—16 սմ: Ծաղկում է մայիսին (ընթացիկ ճյուղերի վրա): Պտուղները հասնում են սեպտեմբերի վերջին: Տալիս է անբավարար վերան: Բնի շրջակայքում և նրանից 4—5 մ հեռավորութիւն վրա առաջացնում է արմատամացառներ: Ունի նոսր, բայց տարածուն սաղարթ: Անհրաժեշտ է օգտագործել թեքութիւնների և բաց տարածութիւնների կանաչապատման համար (պաշտպանված տեղերում):

Թխկի թաթառ.— *Acer palmatum* Thunb. Տարածված է Ճապոնիայում, Չինաստանում, Կորեայում, որտեղ հասնում է 8 մ

բարձրութիւն՝ ունենալով 50—70 սմ տրամագծով բուն: Տնկիւնները բերվել են 1950 թ. Բաթումիից և տնկվել Սարի թաղի հարավ արևելյան թեքութիւն վրա սպիտակ հացենու, կանաչական բուռնուկի և սպիտակ ակացիայի հետ խառը: Տնկիւններից մնացել է միայն մեկը, որի բարձրութիւնը այժմ հասնում է 4 մ-ի, պսակի տրամագիծը 2 մ-ի, բնինը՝ 8 սմ: Ծաղիկում է մայիսի վերջին: Ընթացիկ աճը ըստ բարձրութիւն ներկայումս 6—7 սմ է: Պտղաբերում է: Ծաղիկները մանր են և աննշան: Պտուղները հասունանում են սեպտեմբերի վերջերին: Հիվանդութիւններից և վնասատուներից չի տուժում: Զերմասեր է, միամյա շիվերը հաճախ մասնակի ցրտահարվում են, իսկ ցուրտ ձմեռներին վնասվում են անդամ 2—3 տարեկան ճյուղերը: Դեկորատիվ է՝ վեղեկացիայի ընթացքում գեղեցիկ կարմրավուն տերևների, իսկ ձմռանը 1—2 տարեկան ճյուղերի կանաչ-կարմրավուն գունավորման շնորհիվ: Մի քանի ծառերի մոտ վերերկրյա մասի չորացումից հետո արմատավզիկից առաջացած հոռաշվերը առաջին տարին հասել են 1—1,5 մ բարձրութիւն, սակայն հաջորդ ձմռանը ամբողջութեամբ ցրտահարվել են:

Թաթատերե թխկին պետք է տնկել լուսավոր և քամիներից պաշտպանված տեղերում: Ամառվա երկրորդ կեսին դադարեցնել ջրումը որպէսզի միամյա ճյուղերը փայտանան և ձմռանը չցրտահարվեն: Իր բարձր դեկորատիվ արժանիքների համար շատ սահմանափակ չափով կարելի է օգտագործել քաղաքի պաշտպանված մասերի կանաչապատման մեջ:

Լիկվիդամբար խեծատու.— *Liquidambar styraciflua* L. Տարածված է Հյուսիսային Ամերիկայում, որտեղ հասնում է մինչև 45 մ բարձրութիւն՝ ունենալով 120—150 սմ տրամագիծ: ՍՍՍՄ-ում լայն կերպով մշակվում է Սև ծովի ափերին, հաջողութեամբ աճում է Լենքորանում և Միջին Ասիայում, Լվովում կան պտղաբերող ծառեր, իսկ Կիևում և Պոլտավայում սիստեմատիկաբար ցրտահարվում է:

Երևանում հանդիպում է միայն Հաղթանակի զբոսայգում, որտեղ տնկվել է 1951 թ. Բաթումիից բերված 4—5 տարեկան տնկիւններով: Ներկայումս մնացած 27 տնկիւններից լավ են աճում միայն երեքը, որոնցից ամենամեծն ունի 4,2 մ բարձրութիւն և 5 սմ տրամագիծ: Վատ աճման պատճառը անբավարար խնամքն է, առանձնապէս անկանոն, ոչ ժամանակին և սակավ ոռոգումը, իսկ լիկվիդամբարը պահանջկոտ է հողի և առանձնապէս նրա վտանգութեան նկատմամբ: Ծառերը դեռևս չեն պտղաբերում: Վարակված չեն վնասատուներով, չեն ցրտահարվում, սակայն որոշ չափով տուժում են քլորոզից:

Լիկվիդամբարը իր ուղիղ սպիտակ ընի, գեղեցիկ բրգաձև պսակի և խոշոր գեղեցիկ կարտված փալուն տերևների շնորհիվ չափազանց դեկորատիվ ծառատեսակ է: Չնայած դրան այն դեռևս սահմանափակ քանակով պետք է տարածել Երևանի պարտեզների որոշ գոգավորութիւն և ոռոգման մեծ հնարավորութիւններ ունեցող տարածութիւնների վրա:

Խամեցիպարիս (գեռնալոնի) Լավսոնի.— *Chamaecyparis Lawsonia* (Andr.) Parl. Տարածված է Հյուսիսային Ամերիկայում, որտեղ հասնում է 40—60 մ բարձրութիւն: ՍՍՍՄ-ում մշակվում է հիմնականում Սև ծովի ափերին: Երևանում հանդիպում է Հաղթանակի զբոսայգում, ուր տնկվել է 1949 թ. Բաթումիից բերված 3—4 տարեկան տնկիւններով: Տնկույնները կատարվել են հարթ տարածութեան վրա, համեմատաբար պարարտ հողերում,

խրամատների մեջ, մաքուր, բույր բույսից 1 մ, շարքը շարքից 2,5 մ հե-
ռավորություն: Պահպանված 38 ժառերը ներկայումս գտնվում են բարվոք
վիճակում և տալիս են բավարար աճ: Նրանց միջին բարձրությունը հասնում
է 1,6—1,9 մ-ի, պսակի տրամագիծը՝ 0,7—0,8 մ, բնի տրամագիծը հիմքում՝
5—6 սմ, վերջին տարիների ընթացիկ աճը՝ 20—21 սմ:

Սամեցիպարիսը որպես փշատերև մշտադալար բարձր դեկորատիվ բույս
պետք է որոշ չափով տարածվի Երևանի պարտեզներում ու պուրակներում:
Սակայն պետք է նկատի ունենալ, որ նա հաջող է աճում միայն բերրի հո-
դերում և ջերմային բարենպաստ պայմաններում:

Նուրբա կովկասյան.— *Diospyros lotus* L. Տարածված է Կովկասում՝
հատկապես Սև ծովի ափերին և Լենքորանում, որտեղ առանձին ծառեր հաս-
նում են 25—30 մ բարձրության, ունենալով 1,1—1,3 մ բնի տրամագիծ:
1948 թ. տնկիներ բերվել են Սև ծովի ափերից և տնկվել Երևանի անտառա-
չին տնտեսության Նորքի նախկին տնկարանում՝ հեռուստատեսության կայա-
նի մոտ: Տնկումը կատարվել է խրամատներով քամիներից պաշտպանված և
համեմատաբար պարարտ հողակտորի վրա: Այժմ ծառերի բարձրությունը
հասնում է 3,5—4 մետրի, բնի տրամագիծը՝ 7—8 սմ-ի, իսկ պսակի տրա-
մագիծը 2—2,5 մ-ի: Վերջին տարիների ընթացքում բոլորովին չեն
ցրտահարվել: Ծաղկում են և պտղաբերում: Ծաղկումը տեղի է ունենում հու-
նիսի առաջին կեսին, պտուղները հասունանում են հոկտեմբերին: Հատման
դեպքում ծառերը վերականգնվում են բնային մացառների միջոցով: Սուրբան
հիվանդությունների և վնասատուների նկատմամբ բավականին դիմացկուն
ծառատեսակ է: Ամբողջ տարվա ընթացքում չի կորցնում իր բարձր դեկո-
րատիվությունը: Հնարավոր է մշակել համեմատաբար փուլար հողերում, քա-
միներից պաշտպանված և լուսավորության նորմալ պայմաններ ունեցող տե-
ղերում:

Կաղնի շագանակատերև.— *Quercus castaneifolia* C. A. Mey
ՍՍՍՐ-ում տարածված է միայն Լենքորանի անտառներում, որտեղ ծառերը
հասնում են մինչև 30 մ բարձրության, բնի տրամագիծը 1—1,2 մ: Չափա-
զանց դեկորատիվ է, տալիս է բարձրորակ բնափայտ: Երևանում հանդիպում
է միայն կանաչ գոտում՝ Նորքի հարավ-արևելյան թեքության վրա (երեք
խմբով, լուրաքանչյուրը 300—400 ք. մ տարածություն, շուրջ 44 ծառ) և
Հաղթանակի պարկում (մուտքի ձախ կողմում՝ 1 ծառ): Տնկումները կատար-
վել են 1939 թ. խրամատների մեջ, Հյուսիսային Կովկասից բերված 5—6
տարեկան տնկիներով երկաթածառի հետ խառը հետևյալ հերթականությամբ՝
շագանակատերև կաղնի—երկաթածառ—2. կ.—2. կ.—երկաթածառ: Տնկման
սխեման երբեմն խախտված է, որոշ խմբերում մեկական տնկվել է կովկաս-
յան բոխի Բացի ալը, ուռջման ժամանակ և քամու միջոցով այլ տեղերից
բերվել են ամերիկյան հացենիների սերմեր, որոնցից առաջացել են մինչև
5—6 մ և ավելի բարձրություն ունեցող ծառեր: Ներկայումս շագանակատե-
րև կաղնու ծառերը 27—30 տարեկան են, ունեն 15—17 մ բարձրություն և
25—30 սմ տրամագիծ, զբաղեցնում են ծառուտի առաջին շարահարկը, չեն
ցրտահարվում, վարակված չեն հիվանդություններով և վնասատուներով: Ծաղ-
կում են ապրիլի երկրորդ կեսին, պտուղները հասունանում են հոկտեմբերին:
Տալիս են ինքնացանք, թե մալր բույսերի շրջակայքում և թե նրանից 500—

600 մ հեռավորություն վրա (հանդիպում են ինքնացանքից աճած 2,5—3 մ բարձրություն ունեցող բույսեր):

Շագանակատերև կաղնին իր արտաքին ձևով, պսակի խտությունը, տերևների ձևով և գունով բարձր դեկորատիվ ծառ է՝ միանգամայն հեռանկարային Երևանի և նրա մոտակա շրջակայքի կանաչապատման համար:

Կաղնի կարմիր.— *Quercus rubra* L. Տարածված է Հյուսիսային Ամերիկայում, որտեղ հասնում է մինչև 40 մ բարձրության: Աճում է գետահովիտներում և խոնավ թեքությունների վրա: Միանգամայն ցրտադիմացկուն է: ՍՍՌ-ում լայն կերպով մշակվում է Ուլրաինայում և Հյուսիսային Կովկասում:

Երևանում հանդիպում է միայն կանաչ գոտում՝ Հաղթանակի զբոսայգում: Տնկումները կատարվել են երկու խմբով 1951 թ. Հյուսիսային Կովկասից բերված տնկիներով: Մեկ խմբից մնացել է 2 ծառ, իսկ մյուսից 14 ծառ: Բույսերը գտնվում են խնամքի վատ պայմաններում, ժամանակին չեն ջերմվում, հողը չեն փխրեցնում: Տուժում են քլորոզից: Քիչ թե շատ նորմալ պայմանների մեջ են միայն 2 ծառ: Վատ պայմաններում գտնվող ծառերի ընթացիկ աճը վերջին տարիներում 4—6 սմ է, իսկ համեմատաբար լավ պայմաններում գտնվողները՝ 30—32 սմ:

Նկատի ունենալով կարմիր կաղնու բարձր դեկորատիվությունը, թերևս սահմանափակ, այն պետք է տարածել Երևանի կանաչ շինարարության մեջ՝ մշակելով թուլ կրային, պարարտ հողերի վրա, քամիներից պաշտպանված տեղերում և բարձր ազդեցությունից ազնային միջոցառումների կիրառմամբ:

Կեչի Լիտվինովի.— *Betula Litwinowii* A. Doluch. Տարածված է Անդրկովկասում, Հայաստանում հանդիպում է միայն անտառների վերին եզրերում, ուր հանդես է գալիս որպես փոքր ծառ կամ թուփ: Կեչին շատ պահանջոտ է հողի բերրության և խոնավության նկատմամբ, այդ պատճառով էլ Երևանի պայմաններում վատ է աճում: Անտառտնտեսության կողմից այս վերջին տարիներին 3—4 տարեկան տնկիներով կատարված տնկումներն անկանոն ուղղման պատճառով դուրս են գալիս շարքից: Չնայած դրան կանաչ գոտում կան Լիտվինովի կեչու երկու խոշոր ծառ, որոնց բարձրությունը հասնում է 6—8 մ-ի, բնի տրամագիծը 10—12 սմ-ի: Ծաղկում են ապրիլին, պտուղները հասունանում են սեպտեմբերին, սերմերը ծլունակ են:

Կոտայքի անտառտնտեսության, Երևանի կանաչապատման տրեստի և Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բուսաբանական այգու փորձը ցույց են տալիս, որ կեչու այդ դեկորատիվ տեսակը կարելի է ներդնել Երևանի կանաչ շինարարության մեջ:

Կելրեյաներիա.— *Koelreuteria paniculata* Laxm. Տարածված է Չինաստանում, Կորեայում, Ճապոնիայում, իսկ ՍՍՌ-ում հանդիպում է միայն մշակության մեջ՝ Ղրիմում, Կովկասում և Անդրկովկասում: 1946—1947 թթ. Իջևանի և Երևանի տնկարաններում աճեցրած տնկանյութը տեղադրվել է Նորքի սարալանջում և Իջևան—Ուղանթալ խճուղու երկարությունը: Երկու տեղում էլ, տնկումները տվել են դրական արդյունք: Երևանում տնկումները կատարվել են խրամատներով և փոսերով՝ հացենիների, թխկիների և այլ տեսակների հետ խառը: Ներկայումս կելրեյաներիան իրեն շատ լավ է զգում, ճյուղերի ցրտահարություն, տերևների այրվածք, զագաթնային ճյուղերի չորացում չի նկատվում: Միանգամայն չորադիմացկուն է, չի վարակվում հիվանդություններով և վնասատուներով, ծաղկում է հունիսին (ընթացիկ ճյու-

ղերի վրա): Առանձին ծառեր ունեն 4,5—5 մ բարձրություն և 8—10 սմ բնի տրամագիծ: Կեկրեյտերիան տալիս է հրաշալի վերած, թե մալր բույսի շրջակայքում և թե իրանից բավականին հեռու: Հողալին նպաստավոր պայմաններում մեր կողմից 1 ք. մ-ի վրա հաշվվել է 73 բուսակ, որից 10-ը՝ 3 տարեկան, 18-ը՝ 2 տարեկան, 45-ը՝ մեկ տարեկան: Սերմնաբույսերի ծայրերը առաջին ձմռանը երբեմն ցրտահարվում են: Դեկտրատիվ է՝ հատկապես ծաղկման և պտուղների հասունացման շրջանում: Պետք է մշակել չոր թեքությունների վրա և արևոտ տեղերում:

Կրիպտոմերիա ճապոնական.— *Cryptomeria japonica* Don. Տարածված է Ճապոնիայում, որտեղ հասնում է 45 մ բարձրության: ՍՍՌՄ-ում հայտնի է մշակութային մեջ, այն էլ միայն Սև ծովի ափերին: Ջերմասեր և խոնավասեր բույս է, զգալուն օդի հարաբերական խոնավության նկատմամբ, սերում է փուխր, բայց հարուստ հողեր:

Երևանում հանդիպում է միայն Հաղթանակի զբոսայգում ուր Բաթումիից բերված բուսակները տնկվել են 1949 թ.: Երանց մեծ մասը ոչնչացել է և այժմ ընդամենը կա 13 ծառ: Դրանից 4 ծառ ունեն 3,5—3,8 մ բարձրություն, որոնց բնի տրամագիծը հողի մակերեսին 6—7 սմ է, իսկ կրծքի բարձրության վրա՝ 4—5 սմ: Բուլոբն էլ աճում են նորմալ, վերջին տարիների ընթացքում տվել են 25—30 սմ միջին աճ և չեն ցրտահարվել, հիվանդություններով և վնասատուներով վարակված չեն: Առանձնապես լավ են աճում կողքերից ստվերացված անհատները: Պողաբերում են, կոները հասունանում են սեպտեմբերին: Սերմերը կինսունակ են, սակայն դեռևս ինքնացանք չի նկատվում: Երեք տարեկան ասեղնատերևները աշնանը կորցնում են կանաչ գույնը, իսկ չորրորդ տարում լրիվ չորանում են:

Մնացած ծառերից երեքը հատվել են, իսկ վեցն էլ գտնվելով լուսավորության միանգամայն վատ պայմաններում աստիճանաբար դուրս են գալիս շարքից: Այդ ծառերը պահպանելու համար անհրաժեշտ է ծառուտում կցվածությունը հասցնել 0,4—0,5-ի՝ լուսավորելով հատկապես նրանց գագաթները և տանել մանրակրկիտ խնամք: Հավանական է, որ ճապոնական կրիպտոմերիան Երևանում կարելի է աճեցնել քիչ քանակությամբ, առավելապես քամիներից պաշտպանված տեղերում պարարտ հողերի վրա և բարձր ագրոտեխնիկական պայմաններում:

Հացենի սպիտակ.— *Fraxinus ornus* L. Տարածված է Եվրոպայի հարավային մասերում, Փոքր Ասիայում և Անդրկովկասի հարավ-արևելյան շրջաններում, ուր ծառերի բարձրությունը հասնում է 10—15 մ, բնի տրամագիծը՝ 20—30 սմ: Երևանում հանդիպում է կանաչ գոտում, Պուշկինի անվան զբոսայգում և մի քանի փողոցներում: Կանաչ գոտում ծառերի բարձրությունը հասնում է 3 մ-ի, բնի տրամագիծը՝ 10—15 սմ: Ծաղկում է մայիսի երկրորդ կեսին՝ ընթացիկ ճյուղերի վրա: Ծաղիկները հավաքված են խոշոր հուրանում, ունեն սպիտակ գույն, և յուրահատուկ բուրմունք: Վերջին երեք տարիների ընթացքում չի ցրտահարվել: Գագաթնային ճյուղերի չորացում չի նկատվում: Բույնը առողջ է: Սպիտակ հացենին բարձր դեկորատիվ ծառ է, առանձնապես գրավիչ է ծաղկման շրջանում, որի համար պետք է ավելի լայն տարածել Երևանի կանաչ տնկարկներում:

Հուգայտծառ սովորական.— *Cercis siliquastrum* L. Տարածված է Միջերկրական ծովի արևելյան և հյուսիսային ափերի երկրներում: ՍՍՌՄ-ում

հանդիպում է կուլտուրայի մեջ՝ Սև ծովի ափերին, Արևմտև և Կովկասում: Երև-
վանի պարտեզներում հանդիպում է եղակի օրինակներով, եսկ կանաչ գոտում
առանձնապես Նորքի սարալանջի հարավ-արևելյան թեքություն վրա՝ անհա-
մեմատ շատ: Տնկումները կատարվել են 1947 թ. խրամատների մեջ և փոսե-
րով՝ Հյուսիսային Կովկասից բերված 4—5 տարեկան տնկիներով՝ այլ ծառա-
տեսակների հետ խառը: Ներկայումս այդ ծառերը 18—20 տարեկան են, ու-
նեն 4—5 մ բարձրություն, բնի տրամագիծը 12—14 սմ: Մեծ մասամբ բազ-
մաբուն են և ունեն խոշոր թփի ձև: Ծաղկում է մայիսի սկզբներին, ծաղի-
ման շրջանը տևում է 25—30 օր: Պտուղները հասունանում են սեպտեմբե-
րին: Զերմասեր է, չորադիմացկուն, սակայն չի դիմանում ջերմաստիճանի
խիստ տատանումներին, որի պատճառով էլ բնի կեղևը ճեղքվում է: Սիստ-
ձմեռներին ցրտահարվում է, կրեմն միջև արմատավիզը, սակայն գարնանը
առաջանում են արմատամացառներ, որոնք նույն տարում հասնում են 1—1,5
մ բարձրության: Նորքի սարալանջում սովորական հուղալածառը իր շրջակայ-
քում և 20—25 մ հեռավորության վրա տալիս է բավարար վերահ: Սակայն
1—4 տարեկան բուսակների գագաթնային ճյուղերը համարյա ամեն տարի
ենթարկվում են մասնակի ցրտահարման: Հուղալածառի այս տեսակը սահմա-
նափակ քանակով կարելի է տարածել Երևանի պարտեզների և պուրակների
հարավային թեքության վրա, քամիներից պաշտպանված տեղերում:

Հուղայածառ կանադական. — *Cercis canadensis* L. Հայրենիքը Հյու-
սիսային Ամերիկան է, ուր նա հասնում է 15 մ բարձրության, բնի տրամա-
գիծը 30 սմ: ՍՍՌՄ-ում հանդիպում է միայն կուլտուրայի մեջ: Նախորդ տե-
սակի համեմատությամբ այվի ցրտադիմացկուն է: Երևանում հանդիպում է
կանաչ գոտում, մեկական օրինակներով նաև զբոսայգիներում: 1947 թ. Հյու-
սիսային Կովկասից բերված 4—5 տարեկան բուսակները տնկվել են Նորքի
սարալանջում խրամատներով և փոսերով, այլ ծառատեսակների հետ, առանց
որոշակի սիստեմի: Այժմ ծառերը 18—20 տարեկան են: Առանձին ծառերի
բարձրությունը հասնում է 6—7 մետրի: Վերջին երեք տարիների ընթաց-
քում գագաթնային ճյուղերի չորացում, ցրտահարություն, տերևների արևա-
հարություն, հիվանդությունների և վնասատուների փարակվածություն չի
նկատվում, սակայն ջերմաստիճանի խիստ տատանումների հետևանքով բնի
կեղևը ճեղքվածքներ է ստանում: Ծաղկում է մայիսի սկզբին, պտուղները
հասունանում են սեպտեմբերին, տալիս է բավարար վերահ: Մայր բույսի
շրջակայքում հանդիպում են ինքնացանցից առաջացած 1—5 տարեկան բու-
սակներ: Հատկապես ղեպքում բնից առաջացած մացառները առաջին տարում
հասնում են 1,5—1,8 մ բարձրության:

Կանադական հուղալածառը շատ դեկորատիվ է, մանավանդ ծաղկման
շրջանում: Անհրաժեշտ է այն այվի լայն չափով տարածել Երևանի կանաչ
շինարարության մեջ՝ առանձնապես հարավային թեքությունների վրա, լու-
սավոր և պաշտպանված տեղերում:

Աղառը (Սմախ) բուրավետ. — *Rhus aromatica* Ait. Հայրենիքը Հյու-
սիսային Ամերիկան է: ՍՍՌՄ-ում հանդիպում է միայն մշակության մեջ:
Թուփ է, իր հայրենիքում հասնում է 3—3,5 մ բարձրության: Բաթումից
բերված 2—3 տարեկան բուսակները 1947 թ. տնկվել են Քանաքեռի սարա-
լանջի վրա: Այժմ թփերն ունեն 2,5—3 մ բարձրություն և 2 մ պսակի տրա-
մագիծ: Տերևակալում է առատ՝ հիմքից միջև գագաթը: Ծաղկում է մայիսի

սկզբներին: Ծաղիկները ունեն բաց դեղնավուն գույն և նուրբ բուրմունք: Պտուղները հասունանում են սեպտեմբերին, թավոտ են, մուգ կարմիր, մանր, կլոր և հավաքված փոքր պտղափթթուցիկների մեջ: Բուրավետ աղտորը դեկորատիվ թուփ է: Տերևները գարնանը ունենում են լուրահատուկ փայլով բաց կանաչ գույն, իսկ աշնանը ստանում են դրավիչ կարմիր գունավորում: Միանգամայն ցրտադիմացկուն և երաշտադիմացկուն է, հողի նկատմամբ պահանջկոտ է: Կարող է օգտագործվել ինչպես պարկերում ու պուրակներում, այնպես էլ չոր ու քարքարոտ թեքուցիկները անտառապատելիս:

Աղտոր (Սմախ) սովորակաճ.— (*Rhus coriaria* L.). Հայաստանում հանդիպում է Մեղրու, Ալավերդու, Իջևանի, Շամշաղիի և այլ շրջանների անտառալիս ստորին գոտում՝ քարքարոտ թեքուցիկների վրա: Զերմասեր է, լավ է աճում ջրաթափանց հողերի վրա, բաղմանում է սերմերով և արմատալիս մացառներով: Երևանում հանդիպում է միայն գաջի գործարանի դիմաց՝ Զրվեժ հեղեղատի ձախ ափի բլրակի վրա: Տնկույթները կատարվել են 1954 թ. խրամատներով, միանգամայն նպատակահարմար տեղում, բույսերն աճում են նորմալ, արդեն սկսել են պտղաբերել: Ծաղիկները բացվում են հունիսին, ընթացիկ ճյուղերի վրա: Պտուղները հասունանում են սեպտեմբերի վերջերին: Չի ցրտահարվում, հիվանդութուններով չի վարակվում:

Բակխարիս.— *Baccharis halimifolia* L. Տարածված է ԱՄՆ-ի Ֆլորիդա և Տեխաս նահանգներում, որտեղ հասնում է մինչև 4 մ բարձրության: Լուսասեր է, չորադիմացկուն, լավ է աճում հզոր և հարուստ հողերում:

Երևանում հանդիպում է Զրվեժ հեղեղատի ձախ ափի բլրակի հարավարևմտյան թեքուցիկի վրա (գաջի գործարանի դիմաց): Թփի բարձրությունը 1,6 մ է, տրամագիծը 1,8 մ: Չի ցրտահարվում, գազաթնալիս և կմախքալիս ճյուղերի չորացում չի նկատվում, չի վարակվում հիվանդութուններով և վնասատուներով: Ծաղկում է հուլիսին, ծաղիկները մանր են, աննշմարելի: Բավականին դեկորատիվ, սպիտակ, պտուղները հասունանում են նոյեմբերին: Սերմերը կենսունակ են: Թփի շրջակայքում նկատվում է ինքնացանք:

Բակխարիսը պետք է օգտագործել պարտեզների բաց տարածությունների ձևավորման համար:

Ոսկե անձրև.— *Laburnum anagyroides* Medic. Տարածված է Արևմտյան Եվրոպայի հարավային և կենտրոնական մասերում, ուր բարձրությունը հասնում է մինչև 3 մ-ի: Լուսասեր է, պահանջկոտ օդի բարձր խոնավության և հողի բերրիության նկատմամբ, լավ է աճում փուխր և հարուստ հողերում:

1947 թ. Քանաքեռի սարայանջում տնկված 14 թփերից մնացել են 3-ը, որոնք ներկայումս աճում են նորմալ և վաղուց արդեն պտղաբերում են: Մյուս թփերը չորացել են ծառերի ստվերի մեջ գտնվելու պատճառով: Ծաղկում է մայիսի առաջին կեսում, շատ առատ դեղնադեղին գույնի ծաղիկներով, որոնք հավաքված են 25—40 սմ երկարությամբ ունեցող ողկույթներում: Ծաղիկները մուգ են ավելի քան 15—20 օր, ծաղկում է ամբողջ թուփը: Ծաղիկները կապտականաչ տերևների հետ ստեղծում են չափազանց բարձր դեկորատիվություն: Պտուղները հասունանում են հունիսի վերջին և մինչև հաջորդ գարուն մնում թփի վրա: Թփերի շրջակայքում նկատվել են ինքնացանքից առաջացած 1—5 տարեկան բուսակներ: Ըյուղերի ցրտահարություն

և տերևների այրվածք չի նկատվում, չի վարակվում հիվանդություններով ու ֆլասատուներով:

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ոսկե անձրևի տարածման վրա, տեղադրելով նրան հարուստ և հզոր հողակտորների համեմատաբար լուսավոր տեղերում:

Օրոն (սպարտիում) իսպանական. — *Spartium junceum* L. Տարածված է Միջերկրական ծովի ափերին, մշտադալար թուփ է 3,5—5 մ բարձրության: 1946 թվականին տնկվել է Նորքի սարալանջի վրա, խրամաաներով, խառը՝ հիմնականում սղնու, ճապիու, ցախակեռասի հետ: Այժմ կան 50-ից ավելի թփեր, որոնք լավ են աճում, ծաղկում են և պտղակալում: Ծաղկում է հունիսի երկրորդ կեսին: Ծաղիկներն առաջանում են ընթացիկ ճյուղերի վրա, սակեղույն են և գեղեցիկ: Պտուղները հասունանում են սեպտեմբերին: Տերևները մանր են, աննկատելի, քիչ, նրանց դերը կատարում են 1—3 տարեկան կանաչ ճյուղերը: Գազաթնալին ճյուղերի չորացում, հիվանդություններով և ֆլասատուներով վարակվածություն չի նկատվում: Խիստ ձմեռներին ցրտահարվում են անգամ 3—4 տարեկան ճյուղերը: Ցրտահարման դեպքում արմատավիղիկից առաջացած մացառները նույն տարում հասնում են 1—1,5 մ երկարության: Թփերի միջին բարձրությունը ներկայումս 1,8—2,0 մ է, իսկ սաղարթի տրամագիծը՝ 1,5 մ: Դեկտրատիվ է տարվա բոլոր եղանակներին՝ առանձնապես ծաղկման շրջանում: Հնարավոր է օգտագործել պաշտպանված պարտեզներում և չոր քարքարոտ լանջերի անտառապատման համար:

Ունաբ. — *Zizyphus jujuba* Mill. Տարածված է Կովկասում և Անդրկովկասում: Հայաստանում մշակվում է Ախթալայում, Ուզունթալայում և Մեղրիում: Խիստ փշոտ թուփ է 2—6 մ բարձրության, 1,5—2 մ տրամագիծով: Երևանում հանդիպում է հազվադեպ՝ Նորքի ձորի և Հրազդանի կիրճի այգիներում: 1947 թ. մի քանի թուփ տնկվել է Նորքի սարալանջում: Նրանցից ներկայումս մնացել է միայն մեկ թուփ, որն ունի 1,5 մ բարձրություն և 2 մ պսակի տրամագիծ: Գտնվում է լավ վիճակում: Ծաղկում է հունիսի վերջերին և հուլիսին՝ ընթացիկ ճյուղավորումների վրա: Ծաղկման տևողությունը 30—35 օր է: Ծաղիկները մանր են, բաց դեղնավուն: Պտուղները հասունանում են հոկտեմբերի վերջերին և նման են փշատի պտուղներին, սակայն ավելի հյութալի են և համեղ:

Ունաբը չորադիմացկուն և ջերմասեր բույս է: Խիստ ձմեռներին 1—2 տարեկան ճյուղերը ցրտահարվում են: Այլ պատճառով էլ պետք է տեղադրել հարավային թեքությունների վրա, բաց տեղերում և ամառվա կեսին դադարեցնել ջրումը: Դեկտրատիվ է՝ առանձնապես ամռանը և աշնանը՝ պտուղների կազմակերպման ու հասունացման շրջանում: Ունաբից կարելի է կառուցել գեղեցիկ և անանցանելի կենդանի ցանկապատ:

Կամպսիս. — *Campsis radicans* (L.) Seem. Փաթաթվող բույս է: Տարածված է Հյուսիսային Ամերիկայում, ուր հասնում է 10—15 մ երկարության: Պահանջկոտ է հողի նկատմամբ, ջերմասեր է և զգալուն դեպի օդի հարաբերական խոնավությունը: Լուսասեր է, սուվերում բոլորովին չի ծաղկում: Երվանում շատ թիչ քիչ խոշոր թփեր հանդիպում են Հաղթանակի զբոսայգում: Տնկումները կատարվել են 1951 թվին Բաթումից բերված տնկիներով: Նրանց մի մասը ոչնչացել է անբավարար խնամքի և ցրտահարման պատճառով: Մնացած թփերն աճում են նորմալ, սակայն նրանց ընթացիկ տարվա շիվե-

րի ծալրերը համարյա ամեն տարի ցրտահարվում են: Խիստ ձմեռներին ցրտահարվում է գրեթե ամբողջ թուփը: Սակայն արմատավղիկից տված մացառների միջոցով ամբողջութամբ վերականգնվում է հաջորդ վեգետացիալում: Ծաղկում է օգոստոսին, ծաղիկները խոշոր են, աղյուսակարմրավուն և շատ դեկորատիվ: Նրանցից շատ քչերն են պտուղներ կազմակերպում, իսկ դրանք էլ շատ հաճախ լրիվ չեն հասունանում:

Երևանի կանաչապատման մեջ ցանկալի է տարածել սահմանափակ քանակով, այն էլ միայն պաշտպանված տեղերում՝ բարձր ագրոտեխնիկայի կիրառման միջոցով:

Հոտոտ (մորակակոթ) սովորական. — *Clematis vitalba* L. Տարածված է Ղրիմում, Կովկասում, Միջին և Հարավային Եվրոպայում, Փոքր Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում: Աճում է տերևավոր և խոռը անտառներում, թփուտներում՝ ծովի մակերևույթից մինչև 1200 մ բարձրության վրա: Երկվանում հանդիպում է Քանաքեռի սարալանջում, որտեղ տնկվել է 1947 թ.:

Քանաքեռի սարալանջում մորակակոթը մագլցել է մինչև ծառերի գագաթները, ունի 6—7 մ երկարություն: Չի ցրտահարվում, լուսասեր է, սովեբերի դեպքում փուլում է, չի մագլցում և չի էլ ծաղկում: Հողի նկատմամբ պահանջկոտ չէ, լավ է աճում նաև քարքարոտ հողերում: Ծաղկում է հունիսին, պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Տալիս է ինքնացանք: Ամբողջ վեգետացիայի ընթացքում բարձր դեկորատիվ է: Բազմաճյուղ է սերմերով և կտրոններով:

Երևանի պլանտաններում պետք է ավելի լայն կերպով ներդնել կանաչ շինարարության, առանձնապես ուղղահայաց կանաչապատման մեջ:

Վիստերիա չինական. — *Wisteria sinensis* DC. Տարածված է Չինաստանում, որտեղ փաթաթվելով զանազան ծառերի համում է 15—16 մ բարձրության ունենալով 25—40 սմ տրամագծով բուն: Տերևները բարդ են, մինչև 30 սմ երկարությամբ և ունեն բաց կանաչավուն դունավորում: Ծաղկաբույլը ողկույզ է՝ 15—30 սմ երկարությամբ: Ծաղիկները կապտամանիշակագույն են, ուժեղ դուրեկան հոտով: 1948 թվականին տնկվել է նաև Քանաքեռի սարալանջում, որտեղ ցողունի երկարությունը արդեն հասել է 6,5 մ-ի, բնի հաստությունը՝ 4—5 սմ-ի, իսկ ընթացիկ աճը 40—50 սմ է: Ծաղկում է միջին առատությամբ, պտղաբերում է բավարար: Պտուղն ունդ է, արտաքինից խիստ թավոտ 10—20 սմ երկարությամբ և 1,5—2 սմ տրամագծով: Վիստերիան ֆլասատուններով, չի վարակվում, սակայն հողերի կարբոնատայնություն պատճառով հաճախ հիվանդանում է քրոորոզով: Ընթացիկ տարվա ճյուղերի ծալրերը ցրտահարվում են ամեն տարի, իսկ խիստ ձմեռներին ֆլասավում են 2—4 տարեկան ճյուղերը: Խիստ ցրտահարվելուց հետո բույսը արագ վերականգնվում է: Դեկորատիվ է հատկապես ծաղկման շրջանում: Միանգամայն պիտանի է ուղղահայաց կանաչապատման բոլոր ձևերի համար: Նպատակահարմար է տեղադրել պաշտպանված տեղերում:

Ցախակեռաս ցապոնական. — *Lonicera japonica* Thunb. Փաթաթվող բույս է: Տարածված է Ճապոնիայի և Չինաստանի անտառներում: Լուսասեր է, համեմատաբար չորադիմացկուն, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ, սակայն ավելի լավ է աճում հարուստ և հզոր հողերում:

Տնկվել է 1947 թ. Երևանի կանաչ գոտում Քանաքեռի սարալանջի վրա: Ներկայումս բույսերն աճում են նորմալ, միայն առատ ոռոգման հետևանքով

երիտասարդ ճյուղերի ծալքերը չեն փայտանում և երբեմն ցրտահարվում են: Սովորաբար ցողունի կողքերից առաջանում են հոռաշվեր, որոնք տալիս են 1,5—2 մ աճ: Սոռոր թիփերը հատելու դեպքում ամբողջ բույսը նույն տարում վերականգնվում է, մինչև 6—7 մ երկարություն մինչև 1 մ շառավիղով: Ձի վարակվում ֆլասատուններով և հիվանդություններով: Ծաղկում է առատ, չափազանց դուրեկան հոտ ունի, պտղաբերում է միջակ:

Ճապոնական ցախակեռասը որպես կիսամշտադալար և բարձր դեկորատիվ բույս միանգամայն հեռանկարային է Երևանի կանաչ շինարարության, առանձնապես ուղղահայաց կանաչապատման մեջ օգտագործելու համար:

* * *

Ինչպես տեսանք նկարագրված բոլոր էկզոտ տեսակներն էլ համեմատաբար երիտասարդ են (մինչև 30 տարեկան), սակայն ունեն միջին տարեկան և ընթացիկ աճի տարբեր մեծություն: Այդ տեսակետից էլ № 1 աղյուսակում բերած տվյալները ներկայացնում են որոշակի հետաքրքրություն:

Աղյուսակ 1

Երևանի կանաչ գոտու հազվագյուտ էկզոտների միջին, տարեկան և ընթացիկ աճերը

| 1 | 2 Տեսակի անվանումը | 3 Ցալքեր | 4 Բարձրությունը մ-ով | 5 Բնի տրամագիծը մ-ով | 6 Միջին տարեկան աճը մ-ով | Ընթացիկ աճը սմ-ով | | |
|----|---------------------------------------|-------------|-------------------------|-------------------------|-----------------------------|-------------------|-----------|-----------|
| | | | | | | 7 1959 | 8 1960 | 9 1961 |
| 1 | Բարդի Բոլեի | 28 | 20,1 | 27 | 70 | 28 | 21 | 24 |
| 2 | Բոբի կովկասյան | 27 | 13 | 25 | 46 | 35 | 30 | 30 |
| 3 | Բուենդուկ կանաչական | 17 | 8 | 10 | 47 | 50 | 45 | 48 |
| 4 | Երկաթածառ | 28 | 6 | 15 | 35 | 25 | 25 | 20 |
| 5 | Ջելիկա բոբիատերի | 28 | 7 | 15 | 25 | 20 | 20 | 18 |
| 6 | Թիփի թաթառերի | 15 | 4 | 8 | 26 | 20 | 25 | 26 |
| 7 | Լիկվիդաբար | 16 | 4,2 | 5 | 26 | 30 | 37 | 42 |
| 8 | Պամեցիսպարիս Լավոնի | 16 | 1,9 | 5 | 12 | 18 | 20 | 23 |
| 9 | Սուրբա կովկասյան | 14 | 3 | 8 | 21 | 18 | 24 | 23 |
| 10 | Կազնի շաղանակատերի | 29 | 17 | 30 | 58 | 30 | 30 | 25 |
| 11 | Կազնի կարմիր | 15 | 2,1 | 3 | 14 | 17 | 20 | 22 |
| 12 | Կեչի Լիավինովի | 21 | 6,3 | 6 | 30 | 18 | 16 | 18 |
| 13 | Կելրեյտերիս | 14 | 4 | 8 | 25 | 18 | 16 | 10 |
| 14 | Կրիպտոմերիա ճապոնական | 16 | 3,8 | 3,5 | 23 | 25 | 31 | 36 |
| 15 | Հացենի սպիտակ | 18 | 3 | 10 | 16 | 25 | 20 | 20 |
| 16 | Հուդալաթառ սովորական | 20 | 4,5 | 12 | 22 | 15 | 14 | 15 |
| 17 | Հուդալաթառ կանաչական | 20 | 6,4 | 14 | 32 | 24 | 20 | 23 |
| 18 | Աղտոր բուրավիս | 17 | 2,2 | — | — | — | — | — |
| 19 | Աղտոր սովորական | 10 | 2,0 | — | — | — | — | — |
| 20 | Բակիարիս | 18 | 1,6 | — | — | — | — | — |
| 21 | Ոսկե անձրև | 20 | 2,6 | — | — | — | — | — |
| 22 | Սպարտիում (օրոճ) | 17 | 2 | — | — | — | — | — |
| 23 | Ունար | 17 | 1,5 | — | — | — | — | — |
| 24 | Կամպսիս | 13 | 3,5 | — | — | — | — | — |
| 25 | Հոտոտ (մտրակալիթ) սովորական | 18 | 7,2 | — | — | — | — | — |
| 26 | Վիստերիա չինական | 15 | 6,5 | 4 | — | — | — | — |
| 27 | Ցախակեռաս ճապոնական | 18 | 8,6 | 2 | — | — | — | — |

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ նկարագրված ծառատեսակների աճը ըստ բարձրության 20—25 տարեկանից սկսած (իսկ մի

քանիսը ավելի շուտ) Երևանի պլաններում սկսում է անկել, ընդ որում Բոլիբ բարդու, Լիտվինովի կեչու և կելբլտերիայի մոտ ընթացիկ աճը շատ ավելի է զիջում միջին աճին, քան կովկասյան բոխու, երկաթածառի, շագանակատերե կաղնու և հուդալի ծառի մոտ: Լիկվիդամբարը, կանադական բունդուկը, կովկասյան խուրման, կարմիր կաղնին, խամեցիպարիսը և ճապոնական կրիպտոմերիան, որոնք 14—18 տարեկան են, դառնում են իրենց աճի ուժեղ շրջանում: Նրանց մոտ ընթացիկ աճը դեռևս զգալիորեն գերազանցում է միջին տարեկան աճին և հակում ունի ավելի մեծանալու: Սպիտակ հացենու ընթացիկ աճը սկսել է անկել, իսկ թաթատերե թխկու ընթացիկ և միջին տարեկան աճերը համարյա թե հավասարվել են և ամենայն հավանականությամբ ընթացիկ աճը այսուհետև անկելու է:

Թփերի համար աղյուսակում տրված է միայն տարիքը և բարձրությունը, քանի որ ինչպես հայտնի է, նրանք աճելով արագ առաջին տարիներին հայնում են որոշակի բարձրության, որից հետո միայն լայնանում են նոր առաջացող հոռաշվերի և արմատային մացառների միջոցով:

Փաթաթվողները լուրաքանչյուր տարի ցողունի տարբեր մասերում առաջացնում են նորանոր հոռաշվեր, որոնք առաջին վեգետացիայի ընթացքում տալիս են 1,5—3 մ և ավելի աճ, անգամ գերազանցելով առաջացման տեղից հաշված գլխավոր ցողունի երկարությունը: Չինական վիստերիայի և ճապոնական ցախակեռասի մոտ դրան նպաստում է ցողունների ծալքերի ցրտահարման ենթարկվելը, որից հետո հաջորդ գարնանը ցողունի վրա առաջանում են ավելի մեծ թվով հոռաշվեր: Իսկ դրանց շնորհիվ ցողունը անընդհատ հաստանում է, բույսը փարթամանում և զբաղեցնում ավելի մեծ տարածություն: Այդ պատճառով էլ աղյուսակում բերված է միայն փաթաթվողների տարիքը, երկարությունը և հիմքի տրամագիծը:

Նկարագրվող տեսակները բաժանել ենք երեք խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են Բոլիբ բարդին, կովկասյան բոխին, կանադական բունդուկը, շագանակատերե կաղնին, կելբլտերիան, ճապոնական ցախակեռասը, կանադական հուդալածառը, բուրավետ աղտորը, բակլարիսը, հոտոտը, որոնք չեն ցրտահարվում, չեն տուժում օդի չորությունից, հողի կրախուսվածությունից և ազատ կերպով կարող են աճել Երևանի բոլոր պարկերում և պուրակներում:

Երկրորդ խմբի մեջ մտնում են երկաթածառը, գելկվան, Լիտվինովի կեչին, կովկասյան խուրման, սովորական հուդալածառը, ոսկե անձրևը, սովորական աղտորը, սպարտիումը, ունաբը, չինական վիստերիան և սպիտակ հացենին, որոնք որոշ չափով տուժում են ցրտերից կամ օդի չորությունից: Սրանք պետք է մշակել որոշ սահմանափակումով, շատ թե քիչ պարարտ հողերի վրա և համեմատաբար պաշտպանված տեղերում:

Երրորդ խմբի մեջ մտնում են լիկվիդամբարը, կարմիր կաղնին, թաթատերե թխկին, ճապոնական կրիպտոմերիան, խամեցիպարիսը և կամպսիսը, որոնք զգալի չափով տուժում են օդի չորությունից, հողի խոնավության պակասությունից կամ նրա հիմնախոնավությունից: Վերջին երեք տեսակները տուժում են նաև ցրտերից: Այս խմբի մեջ մտնող տեսակները պետք է տարածվեն խիստ սահմանափակ: Սրանց համար պետք է ընտրել պարարտ, հզոր, համեմատաբար թուլ հիմնային և լավ ոռոգվող հողեր: Տեղանքը պետք է ունենա որոշ թեքություն և պաշտպանված լինի քամիներից:

Ցրտահարվող բույսերի վեգետացիոն շրջանը կրճատելու և ընթացիկ տարվա ճյուղերի փախացումն ապահովելու նպատակով ջրունները պետք է պահասեցնել հուլիսից և դադարեցնել սեպտեմբերի կեսերին, իսկ տերևաթափից հետո աշնանալին երաշտի դեպքում տալ ևս մեկ ջուր:

А. А. ГРИГОРЯН, А. А. БОЗОЯН

РЕДКИЕ ЭКЗОТЫ ЗЕЛЕННОГО КОЛЬЦА Г. ЕРЕВАНА

Р е з ю м е

Наши наблюдения показали, что в зеленом кольце Еревана произрастают некоторые очень ценные декоративные деревья и кустарники, которые в городских насаждениях отсутствуют или встречаются очень редко. В статье приводится подробная характеристика роста и поведения 27 видов деревьев и кустарников в местных условиях, причем основное внимание уделяется их зимостойкости и устойчивости к жаре, сухости воздуха и карбонатности почв.

В суровые зимы у железного дерева, дзельквы граболистной, криптомерии японской, церциса обыкновенного, спартиума, унаби, кампсиса, глицинии китайской и жимолости японской годичный прирост частично повреждается морозами. От сухости воздуха в некоторой степени страдают кампсис, золотой дождь, береза Литвинова, дуб красный и ликвидамбар. Нерегулярные поливы отрицательно влияют особенно на ликвидамбар, дуб красный и березу Литвинова.

Наблюдения показывают, что у тополя Болле, березы Литвинова, колрейтерии, граба кавказского, железного дерева, дуба каштанового, церциса после 20—25 лет (а иногда и раньше) текущий прирост значительно уступает среднегодичному приросту, т. е. у этих пород темп роста в высоту затухает. Ликвидамбар, бундук канадский, хурма кавказская, дуб красный, кипарисовик и криптомерия японская в возрасте 14—18 лет находятся в периоде сильного роста и текущий прирост их еще значительно превышает среднегодичный.

Описанные экзоты, исходя из перспектив их распространения в зеленом строительстве г. Еревана, разделены на три группы.

В первую группу входят тополь Болле, граб кавказский, бундук канадский, дуб каштановый, колрейтерия, церцис канадский, сумах ароматный, бахарис, ломонос обыкновенный, золотой дождь и жимолость японская, которые почти не повреждаются морозами и могут выращиваться успешно во всех районах города.

Во вторую группу входят те породы, которые в некоторой степени страдают от сильных морозов или сухости воздуха. Это следующие породы: железное дерево, дзельква граболистная, кипарисовик Лавсона, хурма кавказская, береза Литвинова, церцис обыкновенный (иудино дерево), сумах обыкновенный, ясень белый, спартиум, унаби

и глициния китайская. Их нужно выращивать на более богатых почвах и участках, защищенных от ветров.

В третью группу входят ликвидамбар, дуб красный, криптомерия японская, клен пальчатолистный и кампсис, которые страдают от сухости воздуха, недостаточной влажности почвы, низких температур и щелочности почвы. Поэтому их нужно выращивать на глубоких плодородных почвах, имеющих менее слабую щелочную реакцию, в местах, защищенных от воздействия холодных потоков воздуха.

Поливы пород второй и третьей группы необходимо прекращать во второй половине сентября. Однако эти породы нуждаются в подзимнем поливе.